

# Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես թաղմ. 1923, էջ 317)

## ԽԸ.

Գրուած է Հ. Եղիայի թուղթը Պելկրատէն: Սակայն այդ գրէն որոշ բան մը չի հասկցուի կատարուած ծիսին հանդիսավայրին նկատմամբ. ինչ որ կ'երևի՝ Հայոց եկեղեցին է այն:

Պատմուած ճշգրտ Հ. Եղիայի զոյգ նախորդներուն՝ Ստեփանոսի և Բարդղղի-մէնոսի շրջաններէն մնացած սովորութեանց արդիւնք է անշուշտ: Հոս կը գետեղենք այդ մասը՝ ծիսական սովորութեանց հետաքրքրուողներուն համար:

Գերայարգեցիկը և Վսեմագունեցի տեստն տեստն  
Մխիթարայ աստուածաբանութեան վարդապետի և Սրբայ Հօրն մերում

. . . Նա և յաւուր ուրբաթու խաչեալ ոչ միայն դնեն զխաչելութիւնն, այլ և հան-  
դիսապէս բազմեցուցանեն զսրբազնութիւնն ներ բիւրաւոր մոմեղինացն վառեցելոց. իսկ  
մեք յայնմիկ գիչերին հուպ արշալուսին սկսաք ներ այնքան խառնիխուռն ժողովրդեանն  
հանդէպ սրբազնութեան ժամ ասել ըստ հայկականի կերպին, և ի «տէր երկնից» ին ոմն  
ի զպրաց սկսաւ մարել զամենայն մոմեղէնսն, իսկ ես յայնժամ արգելեցի զնա ասելով,  
թէ այն երկուս մոմն որք են հուպ սրբութեան՝ մնացեն այնպէս վառեալ, և նա սկսաւ  
ընդգիմանալ թէ է խաւարումն, և մինչ ետես թէ ոչ եղև այնպէս, ըստ որում ինքն  
կամէր, իսկոյն ելեալ յեկեղեցոյն վրդովելով զնաց ի տուն իւր: Եւս և զտոյնս երբէք  
տեսեալ և լուեալ իցես, թէ ոք ի զպրաց ճիգմէով կամ ճլերն բաց ոտիւք սպասաւորել  
պատարագին, և մանաւանդ զտոյնս որ բոկ ոտիւք, այսինքն ասանց ճիգմէի և բապճի  
չապիք հազանիլ և ներ այսօրան բազմաց ազանց սպասաւորել ի ծայնաւոր պատարագին: . . .

Եղիայ | Վարդապետ

1733

յունիսի 27

## ԽԹ.

Հայկական Խորհրդատետրին ինչ ինչ մասերուն շուրջ յարուցուած յոյժ կարևոր և հետաքրքրական հարցեր կը պարունակէ հետեւեալ յարգի վաւերաթուղթը:

Պերապաժասի Տեսան Տեսան Մխիթարայ Աբրայ Հօրոյ մերոյ  
գիրագանցի Աստուածարևունքեան վարդապետիդ

Վսեմագունիւ յարգութեամբ և բազմաւ սիրով և ողջունիւ յայտ լիցի, զի յայտ  
ամի եկն աստ ի կրտսանդնուպօլիս ոմն թիֆլիզցի ուղղափառ քահանայ Տէր Գաբրիէլ  
անուամբ, որ զնացեալ ի յերկիրն լէհաց ի քաղաքն ըստանիսլաւ (ուր նստի Ստեփաննոս  
վարդապետն լէհացի) դիպեալ է ոմանց նորագունից կարգաւորաց ուսելոց ի լաթին  
դպրատան անդ եղևոյ. որոց տեսեալ զխորհրդատեսորն՝ վերոյասացելոյ քահանային  
(զօրբագրեցեալ խորհրդատեսորն ի սրբոյ ժողովոյն ասեմ զոր մեք ի կիր առնուլք) ասա-  
ցեալ են, թէ զայս խորհրդատեսոր սրբագրողն ոչ զիտելով բարեպէտ զլաթին լեզուն, չէ  
բարեպէտ սրբագրեալ և թիւր հասկացուցեալ է սրբոյ ժողովոյն. ուստի սղալ է ասացեալ  
են այն բան [«]որ աղբերդ ևս կենաց[»] աղօթին, ուր ասէ (Տպաւորեան յոգևջ սոցա  
զձև մարմնոյ ցուցակի), այլ ասելի է այսպէս (տպաւորեան յոգևջ սոցա զայս գուր նշմարիտ  
մարմին և արիւն Տեսան մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի) տարածելով ի վերայ  
մարմնոյն Քրիստոսի զզօրութիւն բանին. և այսու կերպիւ սրբագրեալ են զխորհրդատեսորն  
այսմիկ քահանայի որ այժմ բնակի աստ. և բաց յայտմանէ ներմուծեալ են զերկու  
աղօթիս ի յերկու տեղիս ասելով թէ պակասէ այս խորհրդատեսորս և ի մեր կատարեալ  
խորհրդատեսորէն լրացուցանեմք զսա. արդ առաջին աղօթին այս է. Զքեզ ուրեմն ամե-  
նագթած հայր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի որդւոյ քոյ տեսանն մերոյ, խոնարհեալք  
աղաչեմք և ինդրեմք, զի ընկալցիս և օրհնեսցես զնուէրս ի զայս, և զուրբս ի, և  
զսուրբս ի պատարագս ամբիծ, զոր քեզ մատուցանեմք. վասն զի սուրբ սուրբ սուրբ ես:  
Զայս աղօթս գրեալ են զկնի աղօթին [«] արժան է ստուգապէս և իրաւ [»] և այլն: Երկրորդ  
աղօթն այս է. Երկիր պազանեմք քեզ Քրիստոս փրկութիւն աշխարհի, բան Հօր պատարագ  
կենդանի ճշմարիտ մարմին, անարատ Աստուած, և կատարեալ մարդ. որպէս բերանովս  
խոտտովանիմ, նոյնպէս և հողովոս դաւանիմ և հաւատամ. աղաչիմ զքեզ որդի սուրբ  
Աստուած տէր ամենակալ, շնորհել մեզաց իմոց զթողութիւն, և տալ ծառայիս քում  
զոգի զպատուութեան, որ և փրկեցայց քե ի յաւիտենական հրոյն վասն կամաւոր չար-  
չարանաց քոց. զի դու ես ճշմարիտ Գառն Աստուծոյ, որ բաշխիս ի փրկութիւն ազգի  
մարդկան և բառնաս զմեզս աշխարհի: Զայս աղօթս գրեալ են յառաջ քան զաղօթն.  
Նայեաց տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից, և այլն: Բաւ է ողջ լերուք:

1733 յունիս 29  
[ Կ. Պոլիս ]

Ն. Խ. Տէրութեան՝ Հ. Թամաս Վարդապետ

Ս.

Յառաջ կը վարէ Հ. Եղիա մանրամասն տեղեկութիւնները իր պաշտօնավայրի  
առօրեայ կեանքին՝ ինչպէս նաև քաղաքական ինչ ինչ դէպքերու շուրջ, որոնք շա-  
րունակութիւն են մեր ԽՉ վաւերաթուղթին պարունակութեան:

Պերապաժեցելոյ և վսեմագունի տեսան տեսան  
Մխիթարայ Աստուածարևունքեան վարդապետի և Աբրայ Հօրն մերում

. . . . Ստամպուլի գերձակ Ղազարի որ կամէր ծառայել մեզ, եկն աստ ի սէլանիկու  
. . . ի մտայ եկեալ է ի սէլանիկ, ասէ թէ ի մտըր հացի օխան Յ փարայ տային, այժմ  
սակաւ ինչ ամացաւ. իվմիր, հացն խիտ թանկ է, մտի օխան 8 փարայ, նմանապէս  
հալէպ և բոլոր անասուի և ումէլի և սէլանիկու սյ (?) քաղաքն 60 արամ սեաւ հացն

1 ստակ է. աստ ևս փոքրացուցին: Տանձին ֆունթն, այսինքն 180 տրամ տանձն 15 սօլտի է, նմանապէս սեղն և ձմերուկն. վերջապէս յէմշի հասրէդ եմ, նաև պանրի.. այսօր մին սեղ առնուլ ետու, բայց յոժ ստրչացայ, զի կարի թանկ գնեալ էին, այսինքն 12 սօլտի, և յսո հացին զնալոց բարկանալոց եմ գնողին . . . . . Ի ներքոյ արեգական ոչ գոյ սոցին [ժողովրդեան Պելկրատու] նման, զի կարի տարբերք են ի հայկան կա- ցաւթենէ: Համանգամայն հայ են և համանգամայն փոսնկք, համանգամայն ուղղափառ են և համանգամայն արտուղի... .. եկեղեցւոյ տեղն չափեցին և զտէքոէթօն առին, և այժմ ոչ սկսին, այլ ի գարնան... .. քանի մի օր կայ, որ ստամպօլու գիր եկն աստ, յորում ծանուցանէ թէ զօրքն թուրքաց խորտակեալ և փախուցեալ են զգօրս պարսից, ի վիտին? ուրախութիւն ևս արարեալ են, նաև սոյնս ճշմարիտ է, զի քառասուն հազար թաթարք բռամբք և ընդդէմ կամաց մոսկովին անցեալ և զնացեալ ի զղլպաշու հողն, տակաւին ոչ է յայտ, թէ ի կողմն ի սպահանու գնան և թէ ի պաղտատու . . . . . վերոգրեալ դազարոսն ասաց թէ ճէզայիրիք խնդրեցին ի թագաւորէն 2 պէլլիք նաւ և նա յօժարութեամբ շնորհեաց նոցա և ի ճանապարհին պատճառաւ մրկկան նոյն 2 նաւքն, նաև իւրեանց նաւուքն խորատոյզ եղեալ են, չորսն ևս անյայտ է, շնն գիտել իսկապէս թէ նոքա ևս խորատոյզ հղին թէ ոչ, այլ միայն զչորսն նաւն տեսաք ի միում նաւահանգստի, վերջապէս 12 նաւուց չորս կան, նոքա ևս երկնչին էլանել անտի, զի ի մոռայու ջրերն 12 նաւք սպանեալու չըջին և որոնեն զսոսա: Կան զայս ևս ասաց, 3 փոքր] նաւ մալթէզի մերձ ռէզիտու առին զոնեալթանապի տանկին, տումէնն և սէրէնն կոտորելով, զնաւարարքն, նաև յետ առնլոյ զկանն և կարասին նոյնոյ նաւուն ջրատոյզ արարեալ են զնաւ Կա և առեալ են զմի պատուական չէքտիրի, և զմի փոքր թագաւորական նաւ, որ է մեծագոյն քան զքափոէթան, և վասն այս պատճառի այժմ զպպտան փաշան բազմօք նաւուք չըջի ի սպիտակ ծովն . . . . :

Գերայարգութեան քում ծառայ  
Եղիա վարդապետ

Յամի փրկութեան մերոյ  
1733 Օգոստոսի 29  
[Պելկրատ]

ԾԱ.

Եկեղեցին՝ որուն կառուցման մասին կը խօսի Հ. Եղիա՝ Պելկրատու Հայոց կը պատկանի:

Սկսած կը նկարագրէ լիհաց քաղաքական շփոթութեան մէկ հետաքրքրական դրուագը, որ տեղի կ'ունենայ՝ ինչ որ կ'երևի՝ իրենց Սարսոն Օգոստոս Գ.ի թա- գաւորութեան սկզբնաւորութեան շրջանին (1733-63):


Գերայարգեցելոյ և վեւեագունի տեսան Մխիթարայ  
Աստուածարանութեան վարդապետի և Աբրայ Հօրն մկրտւմ

Յիսուսաւանդ ողջունի ծանիր, զի սոյն եկեղեցիս հազու եզերի ժե ա [15000] ֆորինթով, սոքա ունին քա [2000]. ֆորինթ, ա [1000] ֆորինթ թէ ևս աճ(ե)ններն որ տալոյ լինին, կամ հազարհինգհարիւր մեծ բան է, յէրլիցին սակաւ օգնութիւն լինի, կամ հազարհինգհարիւր մեծ բան է, յէրլիցին սակաւ օգնութիւն լինի, զի ի գարնան գանձելոց և աւերելոց են զբնակութիւնս նոցա վասն մերձ գոլոյ ներքնաբերդին, և ի սոցանէ 5 մարդ հազու կարէ աղքատօրէն զբնակութիւն ինչ շինել վասն ինքեանց. տան քիրան ևս իստա թանկ է, և ոչ ունին զկարողութիւն ինչ օգնելոյ, թէ և սմաք ի սոցանէ

օգնել կարիցեն, կարի սակաւ լինի: Ուտի մտածելով զայս ոմանց յառաջագայից աւ-  
 ճեկններուն, այսինքն պարոն Յովանէ. կիւլեագին, ճանազդգին և այլոց ոմանց, խորհուրդ  
 արարեալ են ներ ինքեանց, թէ ես ի դիմաց նոցին գրիցեմ առ քեզ, այսինքն գերկուս  
 ինդիրս, որոց մինն է այս, զի դու այդք գրիցես առ սուրբ ժողովն, զի նոքա գրիցեն  
 առ կայսրն և կամ առ այլ ոք, զի ինքեանք ևս օգնիցեն վասն շինման կեկեղեցոյս մերոյ,  
 շնորհելով զիրս նիւթեղէնս, այսինքն թուվլայ և քիրէճ, զի սատ առատապէս զասնի  
 այսպիսի նիւթք թագաւորական, և այսպիսի ինդիրքս կարծեմ ոչ է դէմ սրբոյ ժողովոյն,  
 նաև թագաւորին, զի աստ ոմանց վանորէից շնորհեաց զայսպիսի նիւթս. ոմանց ի  
 սոցունց ըստ մասին և ոմանց ըստ բոլորին: Արդ և իմ մտածելով զսոյնս թերևս վասն  
 սրբոյ ժողովոյն մեզ ևս շնորհիցեն, որպէս շնորհեաց այլոց կարգաւորաց: Իրկիրոզ  
 ինդիր սոցին է այս, որ է կարի խելագասական, նաև ըստ ինքեան է անկարելի, որ  
 է այս, զի սոքա ինդրեն ի քէն, թէ դու այդք վասն սոյնոյ կեկեղեցոյս զոմանս զոմանս  
 դրամս հաւարքեաց այդք եղեալ ի մեծամեծաց. և շուրջ զայսու ոչ է պարտ աստէն երկա-  
 րել, զի է եզական ինդիր: կարի նեղութեան մէջ եմ, նաև տկար, վասն շինման սոյնոյ  
 կեկեղեցոյս, զի յառաջակաք զոլով դրամսէրք և զալջք, նաև անհամաձայնք ցրտապէս  
 շարժին, և մանաւանդ երեցփոխանն որ է բարկացող և կամապաշտ: Մինաս վ. եղև  
 քանոնիկ թմշվարու, միշնորդութեամբ թմշվարու ճէնուալին, 600 ֆորենտ ի տարուջն  
 բաց ի պատարագէն, նաև յայլոց եկամտից կեկեղեցականաց, և այժմ ի վէնա երկզգումք  
 սոպասաւորոք շրջի. . . . Լէհացիք առաքեալ են ի ստամպոլ զմի դեսպան, խոստանալով  
 տալ նոցա զգամանիցան, որպէս զի այնու օգնիցէ ինքեանց: Մեծագոյն խողութիւն զոյ  
 ի միջի սոցա: կայսրն առ սոսա դեսպան յոբաց ասելով թէ զո ոք ի ձէնջ կամիցիք  
 թագաւորեցունե՛լ ինձ հաճոյ է բաց ի յիստանիսլավէն, սոյն գունակ մոսկոֆուն է լինի  
 սասցեալ է, նա և ինկլիզիկն և ֆուչմէնկիկն և պուռանտէպուռքին, և գարտինալն որ  
 է բերան մեծամեծաց լէհացոց՝ իւրաքանչիւրոյ դեսպանաց պատասխանեալ է ասելով, թէ  
 դուք չունիք իրաւունք առ այս ներախարնել զձեզ, զի դուք ի վերայ թագաւորութեանց  
 ձերոց կարէք իշխել և ոչ ի վերայ մեր, զի զորն հաճիմք և զնոյնն ընտրեմք մեզ թա-  
 գաւոր: Եւ ներ դեսպանացս այսոցիկ առաւել զայրացեալ է պրոանտէբուռքին դեսպանն  
 և հարկանեալ զսուրն իւր ի վերայ սեղանին, և նա հեղնելով սկսեալ է ուշաթափիլ  
 առաջի դեսպանին և ասէ զի լինի թէ առանց փասափոռթի գնաս. և դեսպանն ասէ՛նս  
 փասափոռդ ոչ առնում, ինձ ոչ է պիտոյ՞», բայց զկնի սակաւուց պիտոյնայ քեզ և  
 այլն: Արքա կամէին զընտրումն թագաւորին իւրեանց երկարացուցանել, սակայն զօրքն  
 մոսկոֆու, զօրքն կայսերն, զօրքն սակոտնին և պոանդէպուռքին, որք այժմ են ի լե-  
 հաստան՝ ստիպեն զսոսա շուռով կացուցանել, և եթէ լէհացիք ընդդէմ կամաց սոցին  
 անիցեն, յայնժամ սոքա տիրիւոց են բոամբ ի քաղաքս նոցին: Թէպէտ սոքա նախապէս  
 ունէին զսոյն խորհուրդս: Դալլըրանին որդին Յ միլիոն դրամ պահանջէ ի լէհացոց, և  
 ասէ թէ հայր իմ տուեալ է ձեզ այսքան դրամ: Եետ երկուց և երից ատուրց յայգնի  
 կու լինի, թէ ով եղեալ իցէ թագաւոր. . . . Պրոանտէպուռքն 4000 մարդով ինքն գնացեալ  
 է ընդդէմ ֆրանսիզ գօրացն. նմանապէս զօրքն կայսեր և այլոց, և թիւ սոցին աւելա-  
 քան գնորին. . .

1738 Սեպտեմբերի 5  
 (Պեկերաթ)

(Շարունակի)



Գերայարգութեան քուժ  
 Դուստագոյն ծառայ  
 Իդիա վարդապետ

Հ. Ղ. ՏԱՍԵՆ

1738 Սեպտեմբերի 5  
 Ս. Մ. Ս.